Հայաստան համահայկական հիմնադրամ
Հոգաբարձուների խորհուրդ
Hayastan All-Armenian Fund
Board of Trustees

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 15 մարտի, 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 1

2021 թվականի մարտի 15-ի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի օրակարագի 1-ին կետի՝ 2020թ. սեպտեմբերի 27-ին սանձազերծված պատերազմի ընթացքում «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի թվով 9 որոշումներով Հայաստանի Հանրապետության հետ՝ ի դեմս ՀՀ ֆինանսների նախարարի կնքված պայմանագրերով դրամական միջոցներ փոխանցելու հարցի մասին

Լսելով և քննարկելով ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի զեկույցը Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում ռազմական դրություն հայտարարելու հանգամանքներով պայմանավորված ՀՀ կառավարության կողմից կատարված հավելյալ ծախսերի մասին, ՀՀ ֆինանսների նախարար Ատոմ Ջանջուղազյանի պարզաբանումները նվիրաբերության պայմանագրերով նախատեսված միջոցների ծախսման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման մասին և «Բեյքր Թիլլի Արմենիա» աուդիտորական ընկերության ներկայացուցիչ Փառանձեմ Գևորգյանի ելույթը աուդիտի ընթացքում 15.03.2021թ. դրությամբ պարզված հանգամանքների և առկա խնդիրների մասին՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաշվի առնելով հարցի շուրջ առկա տարակարծությունները տվյալ նիստում դադարեցնել հարցի քննարկումը և հրապարակել հայտարարություն՝ համաձայն հավելված 1-ի:
2. Ստեղծել «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամներից և Հիմնադրամի գործադիր տնօրենից կազմված աշխատանքային խումբ՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հանձնարարել աշխատանքային խմբին՝ աշխատել «Բեյքր Թիլլի Արմենիա» աուդիտորական ընկերության և այլ շահագրգիռ կողմերի հետ՝ պատերազմի ընթացքում հավաքագրված միջոցների օգտագործման նպատակների հստակեցման հարցով և մինչև ս.թ. ապրիլի 5-ը հոգաբարձուների խորհրդին ներկայացնել եզրակացություն:
4. Առաջիկայում կրկին անդրադառնալ հարցի քննարկմանը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

Հավելված 1
2021թ. մարտի 15-ի Հոգաբարձուների խորհրդի
29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի
օրակարգի 1-ին կետի վերաբերյալ ընդունված N 1 որոշման

Ք. Երևան
15 մարտի, 2021թ.

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի հայտարարությունը[1]

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի նիստը, որը տեղի ունեցավ ս.թ. մարտի 15-ին, անցավ կառուցողական մթնոլորտում, և հոգաբարձուների խորհուրդը վստահություն հայտնեց, որ պատերազմի ընթացքում հավաքագրված գումարները նպատակային են օգտագործվել: Որոշվեց հոգաբարձուների խորհրդի անդամներից ստեղծել աշխատանքային խումբ, որը կաշխատի միջազգային աուդիտորական ընկերության և ներգրավված այլ կողմերի հետ՝ պատերազմի ընթացքում հավաքագրված և օգտագործված գումարների ուսումնասիրության նպատակով: Հոգաբարձուների խորհուրդը հետամուտ կլինի, որպեսզի փարատվեն հավաքագրված գումարների օգտագործման հետ կապված բոլոր կասկածները և ապահովվի հանրության վստահությունը: Հոգաբարձուների խորհուրդը ևս մեկ անգամ իր խորին շնորհակալությունն է հայտնում բոլոր նվիրատուներին՝ Հայաստանին և Արցախին ցուցաբերվող շարունակական աջակցության և նվիրվածության համար:

Ք. Երևան
15 մարտի, 2021թ.

[1] Հայտարարությունն ընդունվել է հատուկ կարծիքներով:

Հավելված 2
2021թ. մարտի 15-ի Հոգաբարձուների խորհրդի
29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի
օրակարգի 1-ին կետի վերաբերյալ ընդունված N 1 որոշման

Ք. Երևան
15 մարտի, 2021թ.

Արցախյան երկրորդ պատերազմի ընթացքում
«Հայաստան» համահայկական հիմնադրամի հավաքագրված և օգտագործված
գումարների ուսումնասիրության աշխատանքային խումբ

Վան Գրիգորյան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Պետրոս Թերզյան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Զավեն Խանջյան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Ալբերտ Պողոսյան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Նայիրի Տերտերեան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Մարտին Գալստյան	հոգաբարձուների խորհրդի անդամ
Հայկակ Արշամյան	Հիմնադրամի գործադիր տնօրեն

Հայաստան համահայկական հիմնադրամ
Հոգաբարձուների խորհուրդ
Hayastan All-Armenian Fund
Board of Trustees

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան

15 մարտի, 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 2

2021 թվականի մարտի 15-ի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի օրակարգի 2-րդ կետի՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության փոփոխության անհրաժեշտության մասին

Լսելով և քննարկելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կանոնադրության փոփոխության անհրաժեշտության մասին հնչած կարծիքները «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հանձնարարել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությանը՝ 7-օրյա ժամկետում նոր խմբագրությամբ Կանոնադրությունն ուղարկել հոգաբարձուների խորհրդի անդամներին՝ դրա վերաբերյալ իրենց առաջարկությունները ներկայացնելու նպատակով:
2. Առաջիկայում կրկին անդրադառնալ հարցի քննարկմանը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան պող. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

RA, Yerevan, M. Baghramyan ave. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

Հայաստան համահայկական հիմնադրամ
Հոգաբարձուների խորհուրդ
Hayastan All-Armenian Fund
Board of Trustees

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան

15 մարտի, 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 3

2021 թվականի մարտի 15-ի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի օրակարգի 3-րդ կետի՝ 2021թ. Արցախում նախատեսվող ծրագրերի հարցի մասին

Լսելով և քննարկելով Հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանի, Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանի ելույթները 2021թ. Արցախում նախատեսվող ծրագրերի հարցի մասին «Հայաստան» համահայկական հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը

ՈՐՈՇՈՒՄ Է

Հանձնարարել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությանը՝ 5-օրյա ժամկետում մանրամասն տեղեկատվություն ներկայացնել հոգաբարձուների խորհրդի անդամներին 2021 թվականին Արցախում իրականացվելիք բոլոր ծրագրերի մասին՝ դրանց վերաբերյալ իրենց դիրքորոշումը ներկայացնելու նպատակով:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան պող. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

RA, Yerevan, M. Baghramyan ave. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

Հայաստան համահայկական հիմնադրամ
Հոգաբարձուների խորհուրդ
Hayastan All-Armenian Fund
Board of Trustees

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան 15 մարտի, 2021թ.

ՈՐՈՇՈՒՄ N 4

2021 թվականի մարտի 15-ի 29-րդ՝ հեռավար կարգով անցկացված նիստի օրակարագի 3-րդ կետի՝ «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին

Լսելով և քննարկելով գործադիր վարչության 2020 թվականի բյուջեի կատարողականը և 2021 թվականի տարեկան բյուջեն հաստատելու մասին հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանի զեկույցը

ՈՐՈՇՈՒՄ Է

1. Հաստատել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչության 2020 թվականի բյուջեի կատարողականը՝ համաձայն հավելված 1–ի:
2. Հանձնարարել «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր վարչությանը՝ 7–օրյա ժամկետում Պետրոս Թերզյանի հետ լրամշակել 2021 թվականի տարեկան բյուջեն՝ հաշվի առնելով նիստում արված առաջարկությունները և ներկայացնել հոգաբարձուների խորհրդի անդամների քննարկմանը:

ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԱՐՄԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՀՀ, Երևան, Մ. Բաղրամյան պող. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

RA, Yerevan, M. Baghramyan ave. 26/1 | info@himnadram.org | www.himnadram.org | + 374 10 521505

Հավելված 1
Հաստատված է
"Հայաստան" համահայկական հիմնադրամի
հոգաբարձուների խորհրդի
2021թ. մարտի 15–ի նիստի
No 4 որոշմամբ

"ՀԱՅԱՍՏԱՆ" ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ
ԳՈՐԾԱԴԻՐ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ

		Ժամանակահատված՝ 1/1/2020	12/31/2020	
N	Հոդվածի անվանումը	Բյուջե 2020թ.	Ծախս 2020թ.	Տարբերություն
1	Աշխատավարձ և վճարումներ աշխատանքային պայմանագրերով	224,116,950.00	204,580,345.00	19,536,605.00
2	Տնօրենի ֆոնդ	10,000,000.00	1,830,000.00	8,170,000.00
3	Սոցիալական, բժշկական ապահովության վճարումներ	2,000,000.00	1,652,578.00	347,422.00
4	Այլ հարկեր	1,000,000.00	298,896.00	701,104.00
5	Գրասենյակային և տնտեսական վճարումներ	36,814,800.00	20,564,513.47	16,250,286.53
	այդ թվում՝			-
	ա) հեռախոսային կապի ծառայություն	5,000,000.00	4,655,273.32	344,726.68
	բ) հյուրասիրություն	5,000,000.00	1,243,033.63	3,756,966.37
	գ) գրենական պիտույքներ	1,500,000.00	692,904.71	807,095.29
	դ) ավտոմեքենաների պահպանում և շահագործում	5,000,000.00	3,300,040.04	1,699,959.96
	ե) համակարգչային հաշվապահական ծրագրի սպասարկում	2,314,800.00	2,197,800.00	117,000.00
	զ) էլեկտրական սարքավորումների պահպանման և շահագործման ծախսեր	1,000,000.00	707,194.99	292,805.01
	է) բենզին	11,000,000.00	6,855,725.00	4,144,275.00
	ը) տնտեսական ապրանքներ	1,000,000.00	874,141.78	125,858.22
	թ) այլ ծախսեր	5,000,000.00	38,400.00	4,961,600.00
6	Գործուղման ծախսեր	30,000,000.00	10,704,026.97	19,295,973.03
7	Քարոզչական ծախսեր	30,000,000.00	29,217,483.14	782,516.86
8	Հոգաբարձուների խորհրդի և նախագահության նիստերի կազմակերպչական ծախսեր	35,000,000.00	1,689,880.00	33,310,120.00
9	Հիմնական միջոցների ձեռքբերում*	8,000,000.00	18,262,261.63	(10,262,261.63)
10	Աշխատանքի պլանավորում և միջոցառումներ	10,000,000.00	6,889,097.00	3,110,903.00
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	386,931,750.00	295,689,081.21	91,242,668.79

*9–րդ կետի հիմնական միջոցների ձեռքբերում հոդվածի զերածախսը պայմանավորված է "KIA Sportage" ավտոմեքենայի ձեռքբերմամբ, որի արժեքը կազմել է 12,500,000.00 (Տասներկու միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամ:
Մյուս հոդվածներով խնայողությունները պայմանավորված են COVID-19 համավարակով: